ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2023թ.

Ներածություն

Ղեկավարվելով «Անձնական տվյալների պաշտպանության» մասին ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 14-րդ կետով և առաջնորդվելով կառույցի որդեգրած՝ թափանցիկության ու հաշվետվողականության քաղաքականությամբ՝ ներկայացնում ենք Անձնական տվյալների պաշտպանության գործակալության (այսուհետ գործակալություն) հրապարակային հաշվետվությունը, որի նպատակն է ամփոփել նախորդ տարի իրականացրած աշխատանքները և արձանագրել անձնական տվյալների պաշտպանության բնագավառում առկա իրավիճակը՝ մեր կողմից իրականացրած ուսումնասիրությունների հիման վրա:

Եվ, այսպես, հաշվետու՝ 2023 թվականը, կարելի է ասել, ուղենիշային էր Գործակալության համար: Արդեն իսկ ձևավորված համագործակցությունների հենքի վրա տարին հագեցած էր միջազգային կառույցների հետ ակտիվ համագործակցությամբ, տարբեր միջոցառումներին ակտիվ մասնակցությամբ, ուսուցումների առատությամբ ու վարչական վարույթների բազմազանությամբ:

Հաշվետու տարվա ընթացքում Գործակալությունը պարբերաբար հանդես է եկել տեղեկատվական նյութերով և ուղեցույցներով, որոնց միջոցով տեղեկացրել է կոնկրետ ոլորտներում տվյալների մշակման լավագույն փորձի մասին, ներկայացրել տեխնիկական ու անվտանգային խորհուրդներ, թե ինչպես պաշտպանել օգտահաշիվները սոցիալական տարբեր հարթակներում՝ խարդախությունների ու հաքերային հարձակումների զոհ չդառնալու համար: Գործակալությունը շարունակել է մշտադիտարկում ու մոնիթորին իրականացնել դաշտում՝ անհրաժեշտության դեպքում հանդես գալով խոհրդատվություններով, սեփական նախաձեռնությամբ վարչական վարույթներ հարուցելով և վարութային ընթացակարգով խախտումները վերացնելով:

2023 թվականի հիմնական ուղղությունները



Անձնական տվյալների պաշտպանության մասին ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 15-րդ մասը սահմանում է Գործակալության լիազորությունը՝ կատարել հետազոտություններ և մշակողների դիմումների կամ լուսաբանումների հիման վրա տալիս է տվյալներ մշակելու վերաբերյալ խորհրդատվություն կամ տեղեկացնում է անձնական տվյալներ մշակելու վերաբերյալ լավագույն փորձի մասին: Միաժամանակ, հարկ է արձանագրել, որ հասարակության լայն շրջանակում անձնական տվյալների պաշտպանության իրավունքի վերաբերյալ իրազեկվածությունը դեռևս մնում է Գործակալության գերխնդիրներից:

Ելնելով վերոգրյալից՝ Գործակալությունը 2023 թվականին տրամադրել է 235 խորհրդատվություն անձնական տվյալների մշակման վերաբերյալ, որից 206 խորհրդատվություն (բանավոր կամ առցանց), 29-ը գրավոր՝ հիմնականում պետական մարմիններին



Վարչական վարույթներ

Հաշվետու ժամանակահատվածում հարուցվել է 55 վարչական վարույթ, որից
30-ը՝ դիմումների հիման վրա
25-ը՝ սեփական նախաձեռնությամբ



Սեփական նախաձեռնությամբ հարուցված վարույթներում մեծ թիվ են կազմում Կառավարության N 1849-Ն որոշմամբ սահմանված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև այդ մարմինների կողմից պատվիրակված լիազորությունների շրջանակներում տվյալների բազաների փոխկապակցման վերաբերյալ հարուցված վարչական վարույթները, որոնց արդյունքում Անձնական տվյալների պաշտպանության գործակալությունն ամբողջությամբ կամ մասամբ տալիս է թույլտվություն՝ այդ բազաներում առկա անձնական տվյալներին հասանելիություն ունենալուն:

Հատկանշական է, որ 2023 թվականի դեկտեմբեր ամսին Գործակալության կողմից առաջին անգամ վարչական իրավախախտման վարույթի արդյունքում կազմակերպություններից մեկի նկատմամբ կիրառվել է **վարչական տույժ**՝ տուգանք նշանակելու ձևով:

Իրավական ակտերի վերաբերյալ կարծիքներ

Թվով 174 գրավոր կարծիք իրավական ակտերի, այդ թվում՝ միջազգային պայմանագրերի նախագծերի վերաբերյալ: Նշված իրավական ակտերի մեծ մասն անձնական տվյալների մշակման սկզբունքներին համապատասխանության վերաբերյալ կարծիք ստանալու համար անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմնի կարծիքին է ներկայացվել ՀՀ արդարադատության նախարարության ստորաբաժանումների կողմից (Իրավական ակտերի փորձաքննության գործակալություն, Միջազգային իրավական համագործակցության վարչություն):

Հանրային իրազեկում և ուսուցումներ

- 28 ուսուցում ընդհանուր շուրջ 750 անձի մասնակցությամբ, այդ թվում՝
  - Երեխաների անձնական տվյալների պաշտպանության վերաբերյալ իրազեկման բարձրացման նպատակով անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմնի ներգրավմամբ իրականացվել է 8 ուսուցում շուրջ 450 հոգու համար (աշակերտներ, ուսուցիչներ, կրթական գործի կազմակերպիչներ, ծնողներ)
  - Արդարադատության նախարարության «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող՝ քրեակատարողական ծառայողների վերապատրաստման շրջանակում 2023 թվականի անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմնի ներգրավմամբ իրականացվել է 12 ուսուցում շուրջ 360 քրեակատարողական ծառայողի համար:

2023-ի հրապարակվել է 1 ուղեցույց «Երեխաների նկարները համացանցում. հրապարակել՝ առանց վնասելու» վերնագրով:

Գործակալության ֆեյսբուքյան պաշտոնական էջում հրապարակվել է 46 տեղեկատվական նյութ: Դրանց զգալի մասը վերաբերում է համացանցային տարբեր խաբեություններին, որոնց միջոցով չարագործները փիրանում են օգտատերերի անձնական տվյալներին:

Միջազգային համագործակցություն

2023-ին Գործակալությունն ակտիվորեն շարունակել է ստեղծված միջազգային համագործակցությունը գործընկեր կառույցների հետ և մասնակցել մի շարք ոլորտային կարևոր միջոցառումների:

- ✓ Մասնակցություն Անձնական տվյալների ավտոմատացված մշակման դեպքում անհատների պաշտպանության մասին կոնվենցիայի Խորհրդատվական կոմիտեի (T-PD) լիագումար նիստերին:
- ✓ Մասնակցություն Արևելյան գործընկերության երկրների Անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմինների ներկայացուցիչների ցանցի հանդիպումներին:
- ✓ Մասնակցություն Արևելյան գործընկերությունում Հանրային ծառայությունների վերակառուցման և թվայնացման ծրագրերի շրջանակում նախատեսված միջոցառումներին:

Ռեեստրի վարում, ծանուցումներ

Անձնական տվյալների պաշտպանության մասին ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի համաձայն՝ անձնական տվյալներ մշակողները մինչև կենսաչափական կամ հատուկ կատեգորիայի անձնական տվյալներ մշակելը պարտավոր են անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմնին ծանուցել տվյալներ մշակելու մտադրության մասին: Ի կատարումն սույն պարտավորության՝ հաշվետու տարվա ընթացքում 35 տվյալներ մշակողներ Գործակալությանն են ներկայացրել ծանուցումներ, որոնք համապատասխանաբար ներառվել են Տվյալներ մշակողների ռեեստրում: